community

The New Apostolic Church around the world

02/2020/AM

Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը

Խմբագրական
Երջանիկ լինել Քրիստոսին հետևելու մեջ

Ժամերգություն՝
Քրիստոսը ազատ է դարձնում

Ուսմունք՝
Հիսուս Քրիստոսի զոհաբերության նշանակությունը

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Երջանիկ լինել Քրիստոսին հետևելու մեջ

Ժամերգություն

4 Քրիստոսը դարձնում է ազատ

Մանկական անկյուն

10 Հոգեգալստյան հրաշքը
12 Այց Սոֆյային՝ Նոումեայում / Նորկալեդոնիա/

Տեսություն

14 Հիսուս Քրիստոսի զոհաբերության նշանակությունը

Ընդհանուր լուրեր

18 Փոփոխություններ առաքյալների շրջանում

■ Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Օլիվեր Ռյութթենի
■ Հետևի էջի լուսանկարը՝ Քեեֆե Զեթիոբուդիի

Երջանիկ լինել Հիսուսին հետևելու մեջ

Բլուսանակարդ՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ եղբայրներ ու քույրեր,

մեր մեծ ցանկությունը Աստծո և միմյանց հետ հավիտենական միասնություն ունենալն է: Հիսուս Քրիստոսը նախապայմաններ է ստեղծել դրա համար: Նրա կյանքն ու մահը, նրա հարությունն ու համբարձումը, նրա գալուստը ունեցել և ունեն հենց այդ նպատակը: Եթե մենք հավատարիմ մնանք նրա ձեռքերում, նա իսկապես մեզ կառաջնորդի դեպի իր արքայությունը:

Սակայն, մենք ուզում ենք երջանիկ լինել նաև մեր կյանքում: Դա հնարավոր է Հիսուս Քրիստոսին հետևելու միջոցով՝

- Ողջախոհ մարդը, ով որոշել է բարին անել, ով սիրում է իր մերձավորին և օգնում է նրան, միշտ իր տեղը կգտնի հասարակության մեջ:
- Աստված օգնում է հավատացյալին և նրան խաղաղություն է տալիս - նա կարող է ուշադրության կենտրոնում մնալ, ինչ էլ որ պատահի:
- Հիսուս Քրիստոսը մեզ ազատում է շփման վախերից: Նրանց համար, ովքեր որոշել են Հիսուսի կամքը կատարել, նա հնարավորություն և նախապայման է տալիս՝ լինելու երջանիկ ամուսիններ և ծնողներ:

Քրիստոսը նրան է ազատ դարձնում, ով իր խոսքը գործի է վերածում: Նա նրանց հնարավորություն և նախապայման է տալիս դառնալու այն, ինչ իրենք որոշել են: Նրա շնորհիվ մենք կարողանում ենք հաղթահարել չարը, նմանվել իր պատկերին և արժանի լինել նրա արքայությունը գնալուն: Արդեն այսօր մենք կարող ենք երջանիկ կյանք վարել և մյուսների համար օրինանք լինել:

Ձեր՝

Ժան-Լյուք Շնայդեր

Քրիստոսը ազատ է դարձնում:

2020-ի հունվարի 5-ին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը ժամերգություն անցկացրեց Նոյշաթելում / Շվեյցարիա/, որը հեռարձակվեց Արևմտյան Աֆրիկայի երկրների համայքներում, ինչպես նաև Բելգիայում, Ֆրանսիայում և Արևմտյան Շվեյցարիայում

Լուսանկարը՝ ՆԱԵ Շվեյցարիա



Գաղատացիներին 5,1

Քրիստոսը մեզ ազատ դարձրեց: Ուրեմն, պինդ կացեք և վերստին ծառայության լծի տակ մի մտեք,,:

Սիրելի քույրեր և եղբայրներ Քրիստոսով, ես այսօր ցանկանում եմ առաջ քաշել Աստծո առանձնահատուկ մի հատկանիշ, մի առանձնահատուկ տեսանկյուն: Աստված բացարձակ ազատ է: Այսօրվա աշխարհում ազատությունը սիրելի թեմաներից մեկն է, ընդհանուր առմամբ՝ լավ պատճառներով: Սակայն, ազատության կատարյալ օրինակն Աստվածն է: Աստված բացարձակ ազատ է: Ինչու՞: Քանի որ Աստված կատարյալ է, նա կարիք չունի ոչնչի և ոչ մեկի: Նա, այս առումով, միակն է: Աստված կատարյալ է, նա բացարձակ ոչնչի կարիք չունի: Այլ կերպ ասած, նա երբեք չի գործում պարտադրաբար կամ կարիքից դրդված, նա կատարյալ է, նա ոչնչի կարիք չունի:

Ոչ մեկը չի կարող նրան ինչ որ բանում ստիպել: Աստված ամենազոր է և անկախ: Նա երբեք չի գործում ստիպողականության ներքո: Նա անում է հենց այն, ինչ ուզում է, և նրա համար ոչինչ անհնար չէ: Սա կատարյալ ազատությունն է: Եթե սա ասվի որևէ մեկի մասին, բոլորը տհաճ զգացում կունենան և կմտածեն. ,, Եթե որևէ մեկն անի այն, ինչ ուզում է, ապա դա անկանխատեսելի կլինի,,: Դա Աստծուն չի վերաբերում: Աստված անփոփոխելի է, Աստված հավատարիմ է, նա վստահելի է, նա հավատարիմ

է ինքն իրեն: Նա անում էայն, ինչ ասում է, նա պահում է իր խոսքը: Նա ամրագրել է որոշակի թվով օրենքներ, նա անում է իր կամքի համաձայն, և նա բացարձակ ազատ է: Այո, նա անում է այն, ինչ ուզում է, սակայն, նա վստահելի է: Նա քմահաճ չէ, նրա գործերը հաշվենկատ չեն կամ կամայական, նա արժանահավատ է:

Աստված ստիպված չի սիրում, Աստված սիրում է, քանի որ Աստված սեր է, և նա սիրում է առանց նախապայմանների: Նա այսպես չի ասում. ,, Եթե դու անես այս կամ այն բանը, ես քեզ չեմ սիրի,,: Ոչ, նա սիրում է առանց նախապայմանների, նա սիրում է առանց որևէ սպասելիքների: Արդյոք մարդը կարձագանքի նրա սիրուն, թե ոչ, կամ թե նա դրա համար ինչ-որ բան կանի, Աստված նրան սիրում է նույն ձևով: Նրա սերը սեր է առանց նախապայմանների, կատարյալ և անսահման սեր է: Աստծո սերը նրա ազատության գեղեցիկ դրսևորումն է, Աստված սիրում է առանց նախապայմանների, սահմանների, առանց որևէ սպասելիքների: Ինչպես ասում են, Աստված մարդուն ստեղծել է իր ազատ կամքով, իսկ մարդը այդ ազատությունը վատ է օգտագործել: Նա հեռացել է Աստծուց, դրախտում նա անհնազանդ է դառնում և ընկնում է մեղքի տիրապետության տակ: Նա դառնում է չարի ստրուկը: Բայց, քանի որ Աստված սեր է, նա այսպես է որոշել.,, Ես ուզում եմ մարդկանց փրկել,,: Իր սիրով նա իր Որդի Հիսուս Քրիստոսին ուղարկում է երկիր –կարիք չկա երկարբարակ խոսել այս մասին - և Հիսուս Քրիստոսն իր կյանքը զոհաբերում է բոլոր մարդկանց փրկության համար՝ առանց բացառության, առանց սահմանափակումների: Նա իր կյանքը տալիս է ազատկամքով,որպեսզիյուրաքանչյուրոք,ովուզում է, կարողանա ազատվել չարի ազդեցությունից: Իրողությունն այն է, որ բոլոր նրանք, ովքեր որոշել են հետևել Հիսուսին, կարողանում են մկրտվել: Մկրտության միջոցով Քրիստոսը մեզ ազատում է մեր ժառանգական մեղքից և մեզ է նվիրում Աստծո հետ միասնության հնարավորությունը: Աստծո նպատակը մեզ իր արքայություն առաջնորդելն է, և ոչ թե միայն մարդուն չարի ստրկությունից ազատելը և չարի ազդեցությունից հեռացնելը: Նա ուզում է մեզ իր արքայություն առաջնորդել, որտեղ կրկին տիրապետում է Աստծով կատարյալ և հավիտենական ազատությունը, ազատությունը, որը արարչագործության մասն էր: Մարդն ունենալու է Աստծո հետ միասնություն, որտեղ նա հավերժ ու վերջնականորեն ազատ է լինելու: Այդ ժամանակահատվածում՝ մեր մկրտությունից սկսած, երբ մենք ազատվում ենք ժառանգական մեղքից, մինչև այն օրը, երբ Տերը նորից կգա, որպեսզի մեզ առաջնորդի դեպի կատարյալ և վերջնական ազատություն, տեղի է ունենում պրոցես: Ես այն անվանում եմ ,, ազատության պրոցես,,: Քրիստոսն ուզում է մեզ ազատել, որպեսզի մենք կարողանանք ազատ լինել, ինչպես Հիսուս Քրիստոս մարդն էր իր երկրային կյանքում ազատ: Սա այն նշանաբանն է , որը շրջանային առաքյալների հետ համաձայնությամբ առաջարկել եմ այս տարվա համար, այն է՝Քրիստոսը ազատ է դարձնում:

> Աստված ազատ է, սակայն, նա կամայականորեն չի գործում: Նա արժանահավատ է և հավատարիմ:

Նա ուզում է մեզ ազատ դարձնել իր հետ միասնության մեջ: Այս տարի, այսօր, մենք շեշտը դնենք այս նշանաբանի վրա՝ ,, Քրիստոսը մեզ ազատ է դարձնում,,: Մեր երկրային կյանքի ընթացքում նա ուզում է մեզ ազատ դարձնել, ինչպես Հիսուս Քրիստոսն էր որպես մարդ ազատ: Հիսուս Քրիստոսն ազատ էր, քանի որ նա ասում էր.,, Սատանան՝ հակառակորդը, գալիս է, բայց նա ոչ մի ազդեցություն չունի ինձ վրա, ոչ մի իրավունք չունի ինձ վրա,,: Ինչու՞: Քանի որ Հիսուս Քրիստոսը երբեք մեղք չի գործել, դրա համար էլ սատանան՝ չարը, կամ ինչպես էլ նրան անվանենք, ոչ մի իշխանություն չունի նրա վրա, Հիսուսը երբեք մեղք չի գործել:

Հիսուս Քրիստոսը որպես մարդ ազատ էր բոլոր մեղքերից: Նույնը չենք կարող ասել մեր մասին: Ինչ էլ մենք անենք, մեզ չի հաջողվում մեղքից ազատ լինել, սակայն, դա դրամատիկական չէ, քանի որ Քրիստոսը ուզում է մեզ ազատ դարձնել: Նա մեզ նվիրում է իր ողորմածությունն ու ներումը, և ասում է մեզ.,, Եթե դու ինձ մոտ գաս և ինձ հավատաս, եթե դու ապաշխարես և ներում խնդրես, ես կարող եմ քեզ ազատել քո մեղքից, ես կարող եմ մարել քո պարտքերը, և դրանով սատանան այլևս չի կարող իրավունք ունենալ քեզ վրա: Իմ ողորմածությունը կատարյալ ողորմածություն է: Եվ, եթե ես մեկ անգամ քո մեղքերն եմ ներել, սատանան այլևս իրավունք չունի քեզ վրա և դու նորից կլինես կատարյալ ազատ մարդ, ազատ՝ բոլոր մեղքերից ,,:

Քրիստոսն ազատ էր բոլոր մեղքերից, նա ուզում է մեզ ազատ դարձնել: Հիսուս Քրիստոսն ազատ

մարդ էր, նա բացարձակ տիրապետում էր ինքն իրեն: Պարզ է, նա մարդ էր, ինչպես մենք՝ բոլորս: Նա ուներ նույն մարմնական և բարոյական կարիքները, ինչպես՝ մենք: Նա մարդ էր, ինչպես մենք՝ բոլորս, սակայն նա մնացել էր Տեր ինքն իր հանդեպ: Նա այսպես էր որոշել.,, Ես իմ Հոր սիրված Որդին եմ: Ինձ համար կարևոր է իմ Հոր հետ միասնություն ունենալը: Ինձ համար կարևոր է իմ Հորը լսելը: Ինձ համար կարևոր է, և իմ նպատակն է իմ Հոր մոտ գնալը: Առաջին հերթին ես մի Հոր Որդին եմ,,: Սատանան եկել է և նրա փորձության ենթարկել նրանով, որ նրան փող, իշխանություն և փառք է խոստացել, նա ուզում էր նրա մարմնական և բարոյական կարիքներին գոհություն տալ: Սակայն, Հիսուսը միշտ ուշադրություն էր դարձնում այն բանի վրա, որ ամեն ինչ հստակ տարբերակի ու ասի՝ ,, Կա՛նգ առ: Այո, ես իսկապես ունեմ կարիքներ, տարբեր տեսակի կարիքներ, ես առաջադրանք ունեմ կատարելու, ես կարիք ունեմ այս կամ այն բանի,սակայն, ամենից վեր կանգնած է իմ կամքը՝ իմ Հոր հետ միասնության մեջ մնալը: Առաջին հերթին ես իմ Հոր Որդին եմ և ես ուզում եմ վերադառնալ նրա մոտ,,: Այս պատճառով նա երբեք մարդ լինելու ստրուկը չդարձավ: Նա մնաց Տեր ինքն իր վրա և իր մարմնական կարիքների վրա, նա երբեք ենթակա չդարձավ առօրյա կյանքի կարիքներին:

Քրիստոսն ուզում է մեզ ազատ դարձնել: Իսկապես, մենք ունենք կարիքներ մեր կյանքում: Մենք պետք է ուտենք, պետք է խմենք, մենք կարիք ունենք հագուստի, մենք պետք է մեզ մեր կյանքում իրականացնել կարողանանք: Դրանք բացարձակ արդարացված կարիքներ են: Մենք կարիք ունենք հաջողության, մենք ուզում ենք մեր կյանքում մեզ իրականացված գտնել, մեր տեղն ունենալ հասարակության մեջ և նշանակալի թվով գործեր իրականացնել, դա բացարձակ լեգիտիմ է: Բայց, Քրիստոսն ուզում է մեզ այդ հարցում օգնել, որպեսզի նյութական բաների ստրուկը չդառնանք մեր մարդկային գոյությամբ: Քրիստոսը սովորեցնում է մեզ առաջ քաշել ճիշտ առաջնորդությունները : Քրիստոսը խորհուրդ է տալիս մեզ, կանգնում է մեր կողքին և ուժեղացնում է մեզ: Նա օգնում է մեզ՝ դառնալ գիտակից. ,, Այո, իսկապես, ես կարիք ունեմ այս կամ այն բանի,,: Բայց, ուշադրություն: Այդ կարիքները չպետք է հարցականի տակ դնեն մեր Աստծո զավակ լինելը : Դրանք չպետք է ներգործեն Աստծո հետ իմ հարաբերությունների վրա:

Սիրելի եղբայրներ,սիրելի քույրեր,սա,հավանաբար, մի քիչ բարդ է թվում, բայց դա այդպես չէ: Մտածիր, թե ով ես դու: Մենք ընտրված ենք: Մենք Աստծո զավակներ ենք, մենք մեզ նվիրել ենք Քրիստոսին, մենք խոսք ենք տվել հետևելու Քրիստոսին, մենք ուզում ենք Աստծո հետ միասնություն ունենալ, մենք ուզում ենք նրա արքայությունը գնալ: Դա վերաբերում է ինձ: Իմ մարդ լինելը, իմ կարիքները, իմ ցանկությունները, իմ կրքերը իրավունք չունեն ինձ հասցնելու այն վիճակին, որ ես ուրանամ: Ես նա եմ, ով խոսք է տվել հավատարիմ լինել Աստծուն, ով ուզում է Ատծո հետ միասնության մեջ լինել: Իսկ իմ կարիքները, իմ ցանկությունները, իմ կրքերը- այն ամենը, ինչ ձևավորում է իմ առօրյան- իրավունք չունեն ինձ թողնել կամ պարտավորեցնել ինքս ինձ ուրանալու: Քրիստոսն ուզում է մեզ ազատ դարձնել, որպեսզի մենք կարողանանք տեր լինել ինքներս մեզ: Հիսուս Քրիստոսը ազատ մարդ էր, նա բացարձակ տիրապետություն ուներ ինքն իր վրա: Նա մեկ ընդմիշտ այսպես էր որոշել. ,, Ես եկել եմ Հոր մոտից և ես գնում եմ Հոր մոտ: Դուք կարող եք անել այն, ինչ ուզում եք: Ես վերադառնում եմ իմ Հոր մոտ և ոչ ոք ինձ դրանում չի խանգարելու,,:

Նա ծանոթ էր տխրությանը, տառապանքին, դավաճանությանը, նա վիրավորված էր, հալածված, սպանված, ամեն ինչ, ինչ կարելի է պատկերացնել, բայց՝ առանց հետևանքի: Նա վստահ էր.,, Աստված ինձ փրկելու է: Աստված հոգ է տանել այն բանի համար, որ ես կարողանամ նրա մոտ վերադառնալ,,: Հիսուսն ուներ այդ վստահությունը Աստծո հանդեպ:Անշուշտ, նա վախով էր գնում դեպի տառապանք, նա հեշտությամբ չէր անում այդ քայլը, նա ասում էր. ,, Ախ, դա վատ չէ: Պարզ է, որ ես այնտեղ եմ գնալու, բայց . . . ,, Ոչ, ոչ , նա վախենում էր ցավից, նա վախենում էր մահից: Նա մարդ էր, իսկական մարդ, ինչպես դու և ես: Բայց, նա ուներ այս համոզվածությունը՝,, Աստված ինձ փրկելու է: Ես նրան հավատարիմ եմ մնում, ինչում ես համոզված եմ, դա այն է, որ ես գնալու եմ իմ Հոր արքայությունը,,:

Նա ենթակա չէր տիրապետող միջավայրին և տառապանքներին: Մինչև վերջ նա մնաց Տերը իր ճակատագրի: Քրիստոսն ուզում է մեզ ազատ դարձնել, ազատ այնպես, ինչպես ինքն էր: Մենք ևս ենթարկվում ենք փորձությունների, տառապանքների և չարի ազդեցության: Մենք չարի զոհն ենք, որը շրջապատում է մեզ, մենք գործ ենք ունենում Քրիստոսի թշնամու հետ, մեզ Աստծուց բաժանելու նրա բոլոր փորձերի հետ: Սակայն, մենք ունենք այս համոզվածությունը.,, Եթե ես հավատարիմ մնամ,Աստված ինձ իր արքայությունն է տանելու և ինձ փրկելու է,,: Ոչ ոք այնքան ուժեղ չէ, քան նա: Երբ այդ փորձությունները պատում են մեզ, երբ մենք վախենում ենք տառապանքից ու մահից, ապա այդ անվստահությունը մնում է մեզ մոտ, իսկ մենք ունենք այս համոզվածությունը.,, Եթե ես հավատարիմ մնամ, գիտեմ, թե ուր է ինձ տանելու իմ ճանապարհը: Ես հետևելու եմ նրան մինչև նպատակին հասնելը,,: Այս համոզվածությունը մեզ



նվիրում է մի անհավատալի վստահություն: Եթե բոլորը մտածեն թե ինչ ենք դառնալու, ինչ է լինելու տաս տարի անց, հետո ուր ենք գնալու, ապա ես կարող եմ ասել.,, Ես գիտեմ, թե ուր եմ գնալու՝ - Աստծո արքայություն,,: Պարզ է, հնարավոր է, որ ես հիվանդանամ, հավանաբար, նաև մեռնեմ- սա ոչ մեկին դուր չի գալիս, սա սարսափելի է, այստեղ բանավիճելու բան չկա- սակայն, չնայած այդ ամենին՝ ես գիտեմ, թե ուր եմ գնալու:

Հիսուս Քրիստոսը ամբողջովին ազատ մարդ էր նաև իրեն շրջապատող մերձավորի հետ հարաբերություններում: Նա ցույց է տվել բացարձակ անհավատալի ազատություն: Նա ընդհանրապես չի մտածել , թե մեծամասնությունն ինչ կասի: Նա ուշադրություն չի դարձրել նաև ավանդույթներին: Նա հավատացել է միայն մի բանի՝ մարդիկ, այնպես, ինչպես Աստված նրանց տեսնում է, Աստծո կողմից սիրված հոգիներ են, հոգիներ, որոնց Աստված ուզում է փրկել: Նա կատարյալ ազատ էր կանանց հետ շփման մեջ, դա մեկ անգամ ևս ընդգծենք: Իր ժամանակների համար դա հեղափոխական պահվածք էր: Այո, ռաբբին, վարդապետը այդ ժամանակների համար ամբողջովին ոչ սովորական էր ընդունում աշակերտուհիներին: Կանանց որպես աշակերտուհիներ ունենալը հրեական աշխարհում անհնար երևույթ էր: Նա անգամ ֆինանսավորվում էր հարուստ կանանց կողմից: Նա կատարելապես ազատ խոսում էր նրանց հետ, որը ամբողջովին նոր բան էր, որը մենք այսօր թերագնահատում ենք: Դա հեղափոխական էր: Նա հարություն է առել և առաջինը, որոնց նա երևացել է և որոնց իր հարությունը տեղեկացնելու առաջադրանք է տվել, կանայք էին: Նաև այս տեսանկյունից էր նա լիովին ազատ: Լիովին ազատ էր նաև երեխաների հետ

Երբ ես հավատարիմ եմ մնում, ես գիտեմ, թե ուր է ինձ տանում իմ ճանապարհը:

շփման մեջ: Իր ժամանակներում երեխաները ոչ կարևոր և անտեսված էին համարվում: Սակայն, նա թույլ տվեց նրանց ցանկացած հնարավորության դեպքում իր մոտ գնալ: Նրա հարաբերությունները օտարների հետ ևս լիովին ազատ էին, նա հոգ էր տանում հույն կնոջ համար, սամարացի կնոջ համար, հռոմեական հրամանատարի համար: Նրա համար միևնույնն էր, թե ինչ կմտածեն կամ կասեն մյուսները, նա տեսնում էր հոգուն, որը պետք է փրկվեր: Նա լիովին ազատ էր նաև մեղավորի հետ հարաբերության մեջ: Նա բանի տեղ չէր դնում, թե ինչ կասեն մյուսները: Նրա համար կարևոր էր միայն հոգին, ում Աստված ուզում է փրկել- այս առումով հիշենք Զաքեոսին: Կատարյալ ազատ ձևով նա անտեսում էր ուրիշների շաղակրատանքը և նրան համարում էր իր մերձավորը Աստծո աչքերով: Քրիստոսն ուզում է մեզ ազատ դարձնել այնպես, ինչպես ինքն էր ազատ: Նա մեզ սովորեցնում է սիրել, ինչպես ինքն է սիրել:

Հիսուս Քրիստոսը ազատ մարդ էր, նա լիովին վստահում էր Աստծուն և ասում էր.,, Իմ Հայրը ինձ տալու է այն ամենը, ինչ իրեն է պատկանում: Այն ամենը, ինչ նրան է պատկանում, պատկանում է ինձ,,: Նա՝ գիտեր այդ հարստության մասին և ըստ դրա էլ՝ նա կատարյալ ազատ էր: Նա հստակ

ասում էր.,, Եթե որևէ մեկը ինձ ցավ պատճառի, դա ինձ չի ստիպի վրեժ լուծել կամ չարին չարով պատասխանել,,: Նա երջանիկ էր այն ամենով, ինչ Հայրը նրան արդեն տվել էր և ինչ Հայրը դեռ տալու է նրան: Նա ասում էր.,, Մեղավորներից վրեժ լուծելը կամ նրանց պատժելն ինձ ոչինչ չեն տալիս,,, որովհետև նա տիրում էր այն հարստությանը, որով նա միշտ պատրաստ էր ներելու, անգամ նրանց, ովքեր իրեն խաչեցին: ,, Հայր, ներիր նրանց, քանզի նրանք չգիտեն, թե ինչ են անում,,: Նա ուներ այդ ազատությունը, քանի որ նա գիտեր.,, Հայրը տալսի է ինձ ամեն ինչ, արդյոք որևէ մեկը կպատժվի,թե՝ ոչ, դա ինձ ոչինչ չի տալիս: Ես ամեն ինչ ունեմ,,: Նա ազատ էր նաև ներելիս: Քրիստոսն ուզում է մեզ ազատ դարձնել: Անցած տարվա մեր նշանաբանն էր՝ ,, Հարուստ՝ Քրիստոսով,,: Դա մենք չենք մոռացել, դա մենք պահում ենք մեր սրտերում: Եվ, եթե մենք իսկապես գիտակցում ենք, թե ինչ հարստություն է Աստված մեզ նվիրում, ապա նա կարող է մեզ ազատել վրեժի մեր ցանկությունից: Գիտեք, որ այն մարդիկ, ովքեր ուզում են վրեժխնդիր լինել, երբ ցանկանում են ուրիշին պատժել, ունենում են վրեժի այդ անհագուրդ ծարավը, որ Աստված նրան ոչնչացնի, որ նա տառապի, որ նա պատժվի:

Երբեմն վրեժի այս ծարավը անհագուրդ է լինում, քանի որ ինչ էլ որ լինի, լիակատար գոհ չեն լինում, և ի վերջո նկատում են, որ նրանք, ովքեր գոչում են վրեժի մասին, այդ ոգու ստրուկն են դառնում: Այդ մարդիկ խաղաղություն չեն գտնում: Որ մեղավորը օրենքով, դատարանով դատապարտվում և պատժվում է, դա այլ բան է: Դա վերաբերում է հասարակական կյանքին, դա լիովին այլ կանոնակարգ է: Սակայն, մենք խոսում ենք Աստծո հետ մեր հարաբերության մասին: Եթե մենք Աստծուն չենք խնդրում պատժել մեղավորին և զրկել փրկությունից, ապա մենք պատրաստ ենք ներել նրան, քանի որ մեզ ոչինչ չի տալիս որևէ մեկի հանդեպ չարությամբ գործելը և չարին չարով պատասխանելը: Այդ դեպքում կհասկանան. ,, Ես ամեն ինչ ունեմ: Վրեժի ցանկությունը ինձնից գողանում են իմ խաղաղությունը, իմ ներքին պարզությունն ու հանգիստը: Բայց, եթե ես ներում եմ, ապա ես իսկապես ազատ եմ,,: Քրիստոսն ուզում է մեզ ազատ դարձնել, ինչպես ինքն էր ազատ: Դու այնքան հարուստ ես Քրիստոսով, որ դու կարող ես քեզ թույլ տալ այդ շքեղությունը: Մի դարձիր վրեժի ցանկության ստրուկը: Քրիստոսը վստահում էր Աստծուն.,, Աստված ինձ նվիրում է ամեն ինչ, ինչի կարիքը ես ունեմ,,:

Նա ազատ էր բոլոր ահերից ու վախերից, դրանով և կատարյալ ազատ էր ծառայելու Աստծուն և մերձավորին: Նա ազատ էր ծառայության համար: Նրան չէր հետաքրքրում այն, թե ինչ է շահելու, եթե նա այս կամ այն բանը որևէ մեկի համար անի.,,Եթե ես դա նրա համար անեմ, ի՞նչ կստանամ ես դրա դիմաց, եթե ես օգնության եմ շտապում որևէ մեկին, հետո ի՞նչ է նա անելու ինձ համար: Ի՞նչ շահ կարող եմ ես ունենալ, ինչ օգուտներ ես կարող եմ դրանից քաղել,,: Ոչ, նա կատարյալ ազատ էր և այպես էր մտածում.,, Ես ծառայում եմ, քանի որ ես ուզում եմ ծառայել,,: Նա իր շուրջը ոչ մի վախ չուներ: Նա վստահում էր Աստծուն.,, Աստված ինձ նվիրում է ամեն ինչ, ինչի կարիքը ես ունեմ: Դրանով ես կարող եմ ծառայել՝ առանց վախենալու, թե ինչ-որ բան կկորցնեմ,,: Սա ևս մի ազատություն է, որը Քրիստոսն ուզում է տալ մեզ: Երբ մենք մեր ողջ վստահությունը նվիրում ենք Աստծուն, Աստված մեզ տալիս է այն ամենը, ինչի կարիքը մենք իսկապես ունենք.,, Թույլ տուր քեզ վայելելու իմ ողորմածությունը,,: Այսպես ես լիովին ազատ կծառայեմ: Ես այլևս ոչ մի վախ չունեմ իմ շուրջը, ես կարիք չունեմ հաշվենկատ լինելու, թե ինչ շահ կունենամ, եթե ես ինչ-որ բան անեմ Աստծո կամ իմ մերձավորի համար, թե ինչը կլինի իմ օգուտը: Ով այդպես է մտածում, նա ստրուկ է: Իսկ ով վստահում է Աստծուն, գիտակցում է նրա հարստությունը և դրանով լիովին ազատ է ծառայելու:

Վերջում մի կետի մասին էլ՝ Ավետարանում տարբեր ձևերով գրված է, որ Հիսուսը ազատ և բաց է խոսել: Մեկ անգամ ևս՝ նա ընդհանրապես չի մտածել այն մասին, թե ինչ արձագանք կտան մյուսները: Նա եկել էր Ավետարանը տեղեկացնելու, իր Հոր կամքը կատարելու, առանց հաշվի առնելու, թե դա մյուսներին հաճելի է, թե՝ ոչ: Նա ասում էր.,, Երևույթները այսպես են և ոչ թե այլ ձևով,,: Դա, իհարկե, նրան շատ զայրույթ էր պատճառում, քանի որ մարդիկ դրա հետ համաձայն չէին: Իսկ փարիսեցիներին նա իրականում զայրացնում էր: Սակայն, Հիսուս չէր մտահոգվում,: ,, Դա է ճշմարտությունը,,- ասում էր նա, կամ նաև՝ ,, Դա իմ Հոր կամքն է,,: Նաև այս տեսանկյունով է ուզում Քրիստոսը մեզ ազատ դարձնել: Հիմա մենք

Շվեյցարիայում ենք- և որ կարևորն է, ֆրանսիական Շվայցարիայում, որտեղ երևույթները միշտ խաղաղ են ընթանում: Բոլոր մարդիկ ընկերական են ու բարեհամբույր: Չնայած այսօր բոլորն էլ իրավունք ունեն ասելու այն, ինչ ուզում են: Կարող են անհավանական մտքեր, անհամատեղելի կարծիքներ և անմիտ մտքեր արտահայտել,- ես արտահայտվում եմ դիվանագիտորեն,- ու ասեն. ,, Այո, կարիծքների ազատություն է, յուրաքանչյուրն իրավունք ունի արտահայտվելու,,: Ես հարգում եմ դա: Սակայն, պետք է ըմբռնել, որ մենք քրիստոնյաներս, ասում ենք այն, ինչ մտածում ենք, մենք տեղեկացնում ենք քրիստոնեական արժեքների հետ կապը, և մենք ևս մեզ այս առումով հարգում ենք: Շվեյցարիայում իսկապես խնդիր չէ դա, սակայն, այլ երկրներում դա խնդիր է: Յուրաքանչյուրն ասում է այն, ինչ մտածում է, սակայն, եթե քրիստոնյան ասի՝ ,, Այո, բայց լսեք. մերձավորին սիրելը, ներելը, ազնվությունը, աշխատանքը շատ կարևոր են,,-ապա նա կարող է գոհ լինել, որ իրեն չեն գնդակահարում: Այդպես չի լինի: Նաև այստեղ է ուզում մեզ Քրիստոսը ազատ դարձնել և մեզ քաջալերել նրանով, որ ասում է. ,, Տեղեկացրու քո նպատակները: Ես քեզ նրա համար չեմ խնդրում, որ ամբողջ աշխարհը դարձի բերես, բայց Ավետարանի ձայնը պետք է լսելի դառնա,,: Ինչ որ մեկը պետք է ասի.,, Ոչ, այդպես չի լինի, այդպես չի կարելի խոսել: Ես համաձայն չեմ դրա հետ, այդպես չի կարելի գործել: Այդ կարծիքը համատեղելի չէ Ավետարանի հետ: Ես սիրում եմ Հիսուսին և հետևում եմ նրան: Եվ ես խնդրում եմ ձեզ՝ հարգել իմ կարծիքը,,:

Իմ մտադրությունը քաղաքական առաջնորդ դառնալը չէ կամ հեղափոխական բաներ անելը, սակայն, ներեցեք ինձ, որ ես այսպես ուղիղ եմ ասում- որպես նորառաքելական եկեղեցու պատասխանատու՝ կարծում եմ, որ իրավունք ունեմ ասելու, որ մենք աշխարհից սպասում ենք, որ նա ևս հարգի մեր հավատն ու մեր համոզմունքը: Յուրաքանչյուրի համար ազատությունը գոյություն ունի միայն այն ժամանակ, երբ ուրիշներն էլ են նույնպես ազատ: Ուշադրություն դարձնենք այն բանի վրա, որ Ավետարանի ձայնը շարունակում է լսելի լինել: Եկեք չվհատվենք, չվախենք ցույց տալ, որ մենք հետևում ենք Քրիստոսին: Նաև այստեղ է ուզում մեզ Քրիստոսը ազատ դարձնել: Չվախենանք բացահայտ խոսել Ավետարանի և նրա արժեքների հետ մեր կապից:

Քրիստոսն ազատ էր: Նա մկրտության միջոցով մեզ ազատել է ժառանգական մեղքից: Քրիստոսն ուզում է մեզ ազատ դարձնել, ինչպես ինքն էր ազատ: Նա ուզում է մեզ նվիրել իր ողորմածությունը, ազատել մեզ մեղքի բեռից, մեղքի ծանրությունից, որը խաթարում է մեր հարաբերությունը Աստծո հետ, որը պատճառ է դառնում դժգոհության, թերահավատության և տխրության: Քրիստոսն ուզում է մեզ ազատ դարձնել: Մենք իրավունք չունենք դառնալ ստրուկներ մեր մարդկային լինելիության: Պարզ է, մենք ունենք մարդկային կարիքներ, սակայն, մենք ուզում ենք ամենից առաջ մնալ այն, ինչ մենք կանք: Մենք Աստծո զավակներ ենք, մենք մեզ նվիրել ենք Հիսուսին, մենք պարտավորվել ենք հետևել նրան, և մենք չպետք է մեզ ոչ մի դեպքում ուրանանք: Ինչ էլ որ լինի, մնացած ամեն ինչ երկրորդական է: Մենք որոշել ենք, որ գնալու ենք Աստծո արքայություն: Քրիստոսն ուզում է մեզ ազատություն տալ՝ մնալու մեր ճակատագրի տիրակալը : Ոչ մահը, ոչ տառապանքը, ոչ էլ դժվարությունը ու փորձությունները չպետք է մեզ այդ հարցում խանգարեն: Երբ մենք մնում ենք Քրիստոսի ձեռքերում, մեզ ոչ մի բան չի խանգարի՝ հասնելու մեր նպատակին: Քրիստոսն ուզում է ի դեմս մյուսների՝ մեզ ազատ դարձնել, դրա համար էլ մենք ոչ միամիտ, ոչ էլ թույլ մարդիկ ենք, այլ՝ ուժեղ ենք և ունակ մեր մերձավորի սիրելու, քանի որ մենք գիտենք. ,, Աստված ուզում է նրան փրկել: Ես հարգում եմ նրան: Նա մի մարդ է, մի հոգի, ում Աստված ուզում է փրկել: Հիսուսը զոհաբերվել է նրա համար,,: Քրիստոսն ուզում է մեզ լիովին ազատ դարձնել մյուսների հետ շփման մեջ, նա ուզում է մեզ ազատ դարձնել՝ ծառայելու մեր ձևով: Մենք ազատ ենք, մենք կարող ենք անհաշվենկատորեն, առանց ոչնչի ծառայել, մենք ունակ ենք դրան: Մենք ազատ ենք ներելու մեջ, քանզի մենք գիտենք, որ մյուսների հանդեպ վրեժխնդրությունը, պատժելու ցանկությունը ոչ մի դեպքում մեզ խաղաղություն չի նվիրում: Դրանք միայն կխանգարեն մեզ: Մենք կամենում ենք ներել, դա մենք բացահայտ ենք անում և ազատորեն, որովհետև մենք նվիրված են Հիսուս Քրիստոսին: Քրիստոսվ մենք կարող ենք լիովին ազատ լինել:

Գլխավոր առաքյալի կողմից անցկացված ժամերգությունից

Հիմնական մտքեր

Հիսուս Քրիստոսը մեզ ազատ է դարձնում նրանով, որ մեզ փրկում է մեր մեղքերց և մեղքի ստրկությունից, նրանով, որ մեզ ունակ է դարձնում սիրել առանց նախապայմանների և անել բարին նրանով, որ մեզ համար հնարավոր է դարձնում տերը լինել մեր որոշման և նաև նրանով, որ նա մեզ առաջնորդում է դեպի իր փառահեղություն:

ՀՈԳԵԳԱԼՍՏՅԱՆ ՀՐԱՇՔԸ

ԸՍՏ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑԻ 2,1-47-Ի

Զատիկից հիսուն օր հետո, Հոգեգալստյանը, առաքյալներն այն տղամարդկանց և կանանց հետ, ովքեր հետևում էին Հիսուսին, հավաքվել էին Երուսաղեմում գտնվող մի տան մեջ: Նրանք սպասում էին, որ Սուրբ Հոգուց եկող զորությունը իջնի իրենց վրա, ինչպես Հիսուսն էր ասել:

Եվ հանկարծ երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին:Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս: Այդ նույն ժամանակ քաղաք ուխտավորներ էին այցելել Միջագետքից, Ասիայից, Եգիպտոսից, Լիբիայից և Հռոմից: Նրանք եկել էին, որպեսզի զոհաբերություն անեն Երուսաղեմի տաճարին: Շատ ուխտավորներ եկան այն տունը, որտեղ Սուրբ Հոգով լցված աշակերտները խոսում էին նրանց հետ: Այդ ընթացքում նրանք մի բան ամրագրեցին, որ յուրաքանչյուրը բարի լուրը լսում էր իր լեզվով: Ունկնդիրները հարցնում էին միմյանց.,, Չէ՞ որ սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ են, բայց ինչպե՞ս է, որ մենք նրանց լսում ենք մեր յուրաքանչյուրի բարբառով,,: Մի քանիսը կարծում էր, թե աշակերտները հարբած են: Այդ ժամանակ Պետրոսը վեր կացավ և ասաց.,, Սրանք հարբած չեն, ինչպես որ դուք եք կարծում: Այսօր տեղի է ունենում մի մեծ հրաշք՝ Աստված ուղարկեց Սուրբ Հոգին, ինչպես խոստացել էր մարգարեների միջոցով,,: Ապա նա պատմեց Հիսուսի մասին, թե ինչպես է նա խաչվել և հարություն առել մահից: Պետրոսի քարոզը հուզում է մարդկանց սրտերը: Նրանք հարցնում էին առաքյալներին.,, Իսկ ի՞նչ պիտի մենք անենք,,: Պետրոսը ասում է նրանց.,,



Ապաշխարեցեք, և ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և պիտի ընդունեք Սուրբ Հոգու պարգևը,,։ Շատերը հավատացին Պետրոսին և մկրտվեցին։ Այսպես, 3000 մարդ հավաքագրվեց քրիստոնյաների համայնքի մեջ։
Նրանք միավորվում են, լսում առաքյալների խոսքերը, աղոթում և միասին ընդունում Հաղորդությունը։ Նրանք միմյանց հետ կիսում են այն ամենը, ինչ ունեն։

ԱՅՑ ՍՈՖԻԻՆ՝ ՆՈՈՒՄԵԱՅՈՒՄ/ ՆՈՐԿԱԼԵԴՈՆԻԱ/

Բարև ձեզ իմ ընկերներ, իմ անունը Սոֆի է, ես ինը տարեկան եմ և ապրում եմ Նոումեայում՝ Նորկալեդոնիայի մայրաքաղաքում: Եթե դուք Եվրոպայից մի թունել փորեք գետնի միջով, ապա կարող եք ժամանել իմ այգի:



Նորկալեդոնիան գտնվում է Խաղաղ օվկիանոսի հարավային մասում՝ Ավստրալիայի կողքին: Կղզին հայտնաբերվել է 18-րդ դարում՝ անգլիացի ծովագնաց Ջեյմս Կուկի կողմից: Նորկալեդոնիային է պատկանում աշխարհի ամենամեծ ծովածոցը, այն 2008 թվականից գրանցված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխարհի բնական ժառանգությունների ցուցակում: Կենդանիների ու բույսերի բազմազանությունը, որոնք ապրում են ծովածոցում, արտակարգ է: Օրինակ, կան դելֆիններ, հազարավոր գույնզգույն ձկներ, կրիաներ և շատ այլ կենդանիներ:

Նրանցից մեկը կաղամարն է՝ ութոտնուկ ձուկը, իսկական մի կենդանի գտածո: Այդ տեսակը դինոզավրերից էլ առաջ արդեն վաղուց գոյություն ունի , մոտ 400 միլիոն տարի առաջ:

Ես ձեզ պատմեցի իմ այգու մասին, իրականում այն իմ պապիկի ու տատիկի այգին է: Նրանք են հոգ տանում ինձ համար, քանի որ իմ մայրիկի վիճակը լավ չէ և այս պահին նա ոչինչ չի կարողանում անել: Իմ տատիկի անունը Յվեթթե է, իմ պապիկի անունը՝ Էուգոնե: Նա արդեն թոշակառու քարոզիչ է: Ես ունեմ Ջոելիե անունով ավագ քույր և Ժան-Լյուք անունով մի եղբայր, նրա անունը դրվել է մեր գլխավոր առաքյալի պատվին: Նրանք մեզ մոտ չեն ապրում, այլ՝ խնամող ընտանիքներում:

Եթե դուք գաք իմ պապիկի ու տատիկի այգի, ես ձեզ մի մեծ պտուղ ցույց կտամ, որն աճում է այստեղ, այն կոչվում է գրանադիլա: Այն կարող է մինչև 30 սմ երկարություն, 15 սմ հաստություն և մեկ կիլոգրամ կշիռ ունենալ: Գրանադիլան պատկանում է մրգատեսակներին և բանջարեղենային սալաթներում համեղ է լինում:

Մենք ապրում ենք Սբ. Միշելում, դա Նոումեայի արվարձան է, մենք կիրակի օրերին ստիպված ենք լինում կես ժամ քայլել, որպեսզի հասնենք եկեղեցի:

Վերջերս մեզ առաջին անգամ այցելեց մեր շրջանային առաքյալ Ռայներ Շթորքը: Նրան ուղեկցում էր մեր առաքյալ Ժաննոթ Լայբֆրիդը: Մենք նախապատրաստել էինք մի երգ, որպեսզի դրանով բարի գալուստ ասենք: Երբ մենք երգում էինք, իմ սիրտը արագ էր խփում: Մենք առաքյալների վզից նաև ծաղկեպսակներ կախեցինք, մեր ավանդույթով դա հյուրընկալության բաղկացուցիչ մասն է: Ժամերգությունից հետո ես կարողացա լուսանկարվել մեր շրջանային առաքյալի հետ, ես այն գանձի նման եմ պահում :

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 06/19, Լուսանկարները՝ մասնակիր, stock.adobe.com – chocostar, wildestanimal, Unclesam, PUNTOSTUDIOFOTO Lda



Լուսանկարը՝ Օլիվեր Ռյութթենի/Հյուսիսային Հեսենի երգչախմբի պատուհանի հատված մոտ 1470

Հիսուս Քրիստոսի զոհաբերության նշանակությունը

Ի՞նչ նշանակություն ունի Հիսուսի զոհաբերական մահը մեզ համար: Ինչու՞ պետք է Հիսուս Քրիստոսը տառապեր ու մահանար: Պատասխանները վերցրված են գլխավոր առաքյալ Ժան –Լյուք Շնայդերի ուսուցողական գրություններից:

Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը քրիստոնեական հավատի, կյանքի և քրիստոնեական հրապարակումների էական հիմքն է: Այս առումով դավանաբանության մեջ գրված է՝ ,, Ավետարանի կորիզը Հիսուս Քրիստոսն է, ով խաչի վրա իր մահով և իր հարությամբ ստեղծել է հավիտենական փրկությունը: Քրիստոսի խաչը խորհրդանշում է Աստծո հաշտվողական գործունեությունը մեղավոր մարդկանց հանդեպ

Կորնթացիներին Ա-ի 1,18-ում գրված Պողոս առաքյալի խոսքերը ցույց են տալիս խաչի վրա մահվան հասկացողությունը՝,, Խաչի մասին խոսքը հիմարություն է նրանց համար, ովքեր կորչում են , սակայն, մեզ համար, որ երանելի ենք դառնալու, դա Աստծո ուժն է,,: Խաչի վրա մահը համարվում էր պարտություն, մարդկային հասարկությունից դուրս մնացած և արհամարհված մարդու ամոթալի վերջաբանը : Այստեղ, սակայն, Աստծո իմաստության համաձայն թվացյալ պարտությունը հաղթանակ է, որը հիմնադրել է անպատկերացնելի մեծության փրկության գործ: Հարությամբ Աստված խաչվածին որպես Քրիստոս է հաստատել / Գործք 2,36/, նրանով է միայն տրված հավիտենական փրկությունը,, / Նորառաքելական եկեղեցու դավանաբանություն / ՆԱԵԴ/ 3,4,9,9/:

Գողգոթայում Հիսուսի մահը ստեղծեց մի նոր Ուխտ, որի մեջ մկրտության միջոցով կարող են ընդգրկվել հրեաներն ու հեթանոսները: Այսինքն՝ Հիսուս Քրիստոսի զոհաբերության միջոցով փրկության հիմքը դրվեց, որի մասնակից դարձավ մարդը և ազատվեց Աստծուց հեռու գտնվելուց: Քրիստոսի զոհաբերության միջոցով մարդու հարաբերությունն Աստծո հետ դրվեց մի նոր հիմքի վրա, այդ վաստակը հնարավոր դարձրեց մեղքից ազատումը և Աստծուց տևական բաժանման վերացումը.,, Իսկ եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետև հինն անցավ, և հիմա ամեն ինչ նոր եղավ: Եվ ամեն ինչ Աստծուց է, որ հաշտեցրեց մեզ իր հետ Քրիստոսի միջոցով, և մեզ տվեց հաշտության պաշտոնը / Կորնթացիներին Բ 5,17-19/,,/ ՆԱԵԴ 4,4,2/:

Հիսուսի զոհաբերական մահն ու հավատը

Հիսուսի մահվան քավող բնութագրի մասին Պողոսը խոսում է հավատի և գործի, Ավետարանի և օրենքի հարաբերության մասին իր մեկնաբանություններում: Պողոսը շեշտում է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի կարևորությունը, որպեսզի կարողանան Աստծո առաջ արդարության հասնել: Արդարություն՝ նշանակում է տեղյակ լինել Աստծո մոտիկության ու նրա փրկության մասին:

Առաքյալը գրում է. ,, Որովհետև Աստված, նրա արյամբ, հավատի միջոցով, որպես քավություն էր նախասահմանել՝ ապացույց իր արդարության, ի թողություն ավելի առաջ, Աստծո համբերության ժամանակ գործված մեղքերի, ապացույց իր արդարության ներկա ժամանակում, ապացույց այն բանի, որ ինքն արդար է և կարդարացնի նրան, ով Հիսուսին է հավատում,, /Հռոմ. 3,25,26/: Որ Հիսուսի մահը քավող բնույթ ունի, ըմբռնելի է միայն հավատի մեջ և կարող է ընդունելություն գտնել միայն հավատով: Մարդը՝ որպես օրենքը խախտող, ինքը հնարավորություն չունի իր մեղքերը հաղթահարել կամ մարել: Այստեղ Հիսուս Քրիստոսն է դառնում մեղավորին նրանով, որ նրա փոխարեն իր վրա է վերցնում մեղքը և մահանում է այն մահով, որով դատապարտված է մեղավորը:

Այսինքն՝ հավատը հասկանալու բանալին է և Քրիստոսի զոհաբերությունն ընդունելու էական բաղադրիչը, քանի որ խորհուրդները և մեղքերի քավությունը միայն հավատի միջոցով կարող են տարածել իրենց փրկարար զորությունը:

Հիսուսի զոհաբերական մահը և Սուրբ ջրով մկրտությունը

Խաչի վրա Հիսուսի մահվանն Սուրբ ջրով մկրտության հետ կապի մասին է խոսվում հռոմեացիներին գրված թղթի 6,3-7-ում: Պողոս առաքյալը խոսում է այն մասին, որ մկրտվածը ընդգրկվում է Հիսուսի մահի մեջ: Քրիստոսնյան Սուրբ ջրով մկրտության խորհրդի միջոցով անբաժան կախված է Հիսուսի մահի հետ: Պողոսը գրում է. ,, Կամ չգիտե՞ք, թե մենք բոլորս, որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, նրա մահով է, որ մկրտվեցինք/ . . . /Մենք գիտենք, որ մեր միջի հին մարդը խաչվեց նրա հետ, որպեսզի քայքայվի մեղքի մարմինը, և այլևս մենք չծառայենք մեղքին, որովհետև, ով մեռնում է, ազատ է մեղքից,,/ տող 2,6,7/:

Դավանաբանության մեջ ևս Սուրբ ջրով մկրտության և Հիսուսի զոհաբերական մահվան միջև կապի մասին խոսվում է հռոմեացիներին գրված թղթի 6,3-8-ի համատեքստում: Մկրտվածը մաս ունի Հիսուս Քրիստոսի մահից և նրա նոր կյանքից: Հոգևոր տեսանկյունից՝ նա իրականացնում է այն, ինչ տեղի է ունեցել Հիսուս Քրիստոսի հետ: Ինչպես Քրիստոսն է մարդկանց մեղքերի համար խաչի վրա զոհաբերվել, մարդն էլ պետք է ,, մեղքը մեռցնի, , նրանով , որ այն մերժի: Մկրտությունը հավատացյալին ներգրավում է Քրիստոսի փրկության գործի մեջ այնպես, որ Քրիստոսի մահը Գողգոթայում դառնում է ,, մկրտվողի,, մահը՝ դա նշանակում է վերջ Աստծուց հեռու գտնվելու կյանքին և սկիզբ Քրիստոսով կյանքի: Մկրտությունը ուժ է տալիս մեղքի դեմ պայքարելիս / Հռոմ. 6,3-8/; Կողոս. 2,12,13/: Մկրտությունը Քրիստոսին ,, հագնելն է,,: Նրանով արվում է առաջին քայլը մարդու ներքին նորացման ճանապարհին. ,, Քանի որ բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք,, / Գաղատ. 3,27/: Այս պատկերը ցույց է տալիս հին կյանքից հրաժարվելն ու Քրիստոսի առաքինություններով ,, զգեստավորվելը: Այն նկարագրում է այն, ինչ արտահայտում է ,, ապաշխարություն,, հասկացությունը՝ հին էությունից հրաժարվել և դառնալ դեպի Տերը:

Խոսքը այն մասին է, որ կյաքը պետք է վարել Աստծո կամքի համաձայն: Մկրտվածը խոսք է տալիս իր կյանքը Քրիստոսի տիրության ներքո կազմակերպելու / ՆԱԵԴ 8,1,6/: Առաքյալները,- իսկ դա նրանց էական առաջադրանքն է, -քարոզում են խաչված Քրիստոսին, այսինքն՝ խաչից եկող խոսքը: Նրանք ուշադրություն են դարձնում խաչի փրկարար ներգործության վրա և կոչ են անում՝ ,, Եկե՛ք, հաշտվե՛ք Աստծո հետ,,:

Հիսուսի զոհաբերական մահը և Սուրբ Հաղորդությունը

Հիսուսի զոհաբերական մահվան և Սուրբ Հաղորդության հետ կապվածության մասին խոսվում է դավանաբանության մեջ՝,, Սուրբ Հաղորդությունը հիշատակի ընթրիք է, երբ հիշատակվում է Հիսուս Քրիստոսի մեկ անգամ կատարված մահվան և բոլոր ժամանակների համար վավերական իրադարձությունը: Այդ իրադարձության հիշատակումը կարևոր է, որովհետև նրա միջոցով շեշտվում է, որ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ մարդ է, ով իրական մահ է ունեցել,, / ՆԱԵԴ 8,2,8/:

Սուրբ Հաղորդությունը Հիսուսի մահվան հիշատակումն է և նրա շարունակական տեղեկացումը, որի մասին խոսվում է Կորնթացիներին Ա թղթում՝ ,,Քանի անգամ, որ այս հացն ուտեք և այս բաժակը խմեք, պատմեցեք Տիրոջ մահը, մինչև որ նա գա,, /Կորնթ. Ա 11,26/: Հիսուսի զոհաբերության տեղեկացումն ու հիշատակումը տեղի է ունենում ամենուր այնտեղ, որտեղ տոնվում է Սուրբ Հաղորդությունը, իսկ նրա բնութագիրը որպես հիշատակի ընթրիք՝ մնում է:

Հիսուսի զոհաբերական մահը և մեղքերի քավությունը

Քանի որ Հիսուսի զոհաբերական մահով հինադրվում է քրիստոնյա լինելը, այսինքն՝ լիովին նոր կարգավիճակ Աստծո առաջ, ապա պետք չէ Քրիստոսի զոհաբերությունը և մեղքերի քավության տեղեկացումը ժամերգության ժամանակ իրար հետ նույնականացնել: Քրիստոսի զոհաբերությունը հիմքն է այն բանի, որ կարող է հայտարարվել և տեղի ունենալ մեղքերի քավություն, այնուամենայնիվ, մեղքերի քավությունը միայն մեկ- չափազանց կարևոր -արտահայտությունն է այդ զոհաբերության:

Դավանաբանության մեջ հստակեցված է, որ մեղքերի քավությունն ընդհարնապես և Քրիստոսի զոհաբերությունը սերտ կապի մեջեն.,, Քրիստոսի կատարյալ զոհաբերությունը վերացնում է հին կտակարանային զոհաբերական ծառայությունը: Հիսուս Քրիստոսը վարում է առանց մեղքերի կյանք: Նրա զոհաբերության՝ իր կյանքի կամավոր նվիրաբերման միջոցով / Հովհաննես 10,17,18/ նա կոտրում է սատանայի իշխանությունը և հաղթում է սատանային, նրա գործը, այն է՝ մեղքին ու մահին / Կորնթ. Բ 5,21/: Այդ պահից ի վեր՝ հնարավոր է

դառնում մեղքերի քավությունը մարում իմաստով / Եբրայեցիներին 10,18/, ինչպես նաև մահից ու մեղքից ազատումը / Հռոմեացիներին 3,24/, / ՆԱԵԴ 12,1,8,3/:

Հիսուս Քրիստոսը իր մահով հնարավոր դարձրեց նրանց մեղքերի քավությունը, ովքեր իրեն են պատկանում: Դա տեղի է ունենում նախ Սուրբ մկրտության միջոցով ժառանգական մեղքի ազատվելով: Այստեղ ոչնչանում է Աստծուց հեռու գտնվելու մեղքը, այսինքն՝ լվացվում է այդ մեղքը: Այստեղ դավանաբանությունն ասում ,, Մեղքի տիրապետությունից հիմնովին ազատվելը կատարվում է Սուրբ մկրտությամբ, երբ լվացվում է ժառանգական մեղքը,, / ՆԱԵԴ 2,4,3/: Այդ մասին է ասում է նաև Նիկիա-Կոստանդնուպոլիսի հավատամքում, որում գրված է՝,, Մենք ճանաչում ենք մեկ մկրտություն մեղքերի քավության համար,,:

Դրանից ելնելով էլ առաքյալները հարություն առած Տիրոջից առաջադրանք են ստանում՝ տեղեկացնել մեղքերի քավության մասին / Հովհաննես 20,23/: Այդ առաջադրանքը, որը իրականացնում են առաքյալները, ծառայում է նրան, որ ապաշխարության պատրաստ մեղավորին ազատի մեղքի բեռից, որը նա հավաքել է չար գործեր անելով և չարը մտածելով: Այս առումով դավանաբանության մեջ ասվում է.,, Պետք է տեղեկացվի մեղքերի քավության մասին: Հիսուսը առանձին մարդկանց մեղքերի քավություն տվեց / այլոց շարքում և Ղուկաս 7,48/;

Մեղքերի քավությունը բտեղի է ունենում այն խոսքի միջոցով, որը լիազորվածը ասում է Հիսուս Քրիստոսի անունով: Այն ընդհանուր ձևով ասվում է ժամերգության ժամանակ ամբողջ համայնքին: Սակայն այն ազդում է է նրա վրա, ով այն հավատով է ընդունում և իրականացնում է համապատասխան նախապայմանները: Հիսուսի անունով մեղքերի քավության տեղեկացումը լիազորված է հաշտեցնելու պաշտոն կատարողին՝ առաքյալների ծառայությանը /Հովհաննես 20,23,,/ ՆԱԵԴ 12,1,8/:Դավանաբանությունը վկայում է նաև այն մասին, որ ժամերգության ժամանակ ասված մեղքերի քավությունը ավտոմատ ձևով չի լինում.,, Լիազորությամբ ասված խոսքը Հիսուսի անունով ըմբռնվում է հավատով, մարում է մեղքը,, / ՆԱԵԴ 12,1,8,8/: Մեղքերի քավությունը Սուրբ

Լուսանկարը՝ Մարսել Ֆեյրեի

Ընթրիքի առանձնացումից առաջ ծառայում է նաև նրան, որ հնարավոր դառնա Սուրբ Հաղորդության արժանապատիվ ճաշակումը,, / ՆԱԵԴ 8,2,14/: Տեղեկացված և հավատով ընդունված մեղքերի քավության միջոցով հավատացյալը գիտակցում է, որ Աստծո ողորմածությունն ու գթասրտությունը իրեն ուղեկցելու են իր կյանքի ընթացքում: Աստված դառնում է դեպի մեղավորը և նրան նորից ազատում մեղքից:

ԽմբագրականՀրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդշթրասսե 243, 8051 Ցյուրիխ /
Շվեյցարիաֆրիդրիշ Բիշոֆֆ հրատարակչություն ՍՊԸ, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Փոփոխություններ առաքյալների շրջանում

Միայն մի քանի ձեռնադրություն և հանգստի ուղարկում առաքյալների շրջանում – 2019-ի երկրորդ կիսամյակը համեմատաբար հանգիստ կիսամյակ էր, որն ապահովեց շարունակականությունը: Այժմ ամբողջ աշխարհում գործում է 349 առաքյալ:

Ընդհանուր առմամբ, 249.700 սպասավոր եղբայրներ կատարում են սարկավագի և քարոզչի ծառայություններ: Նրանք առաքյալների հետ միասին հոգում են ամբողջ աշխարհի 58.500 համայնքների քույր – եղբայրների համար : Առաքելոց ծառայությունում գործում է 325 առաքյալ, 8-ը՝ որպես շրջանային առաքյալի օգնական, 15-ը՝ որպես շրջանային առաքյալ և մեկը՝ որպես գլխավոր առաքյալ:

Ձեռնադրություններ և հանձնարարություններ

2019-ի հուլիսի 6-ին՝ շաբաթ օրը, մինչ այդ պահը որպես շրջանային ավագ գործող Մուքոքա Յեն Քաբալան / 1977/ ընդունեց առաքյալի պաշտոնը: Գլխավոր առաքյալ Ժան- Լյուք Շնայդերը այդ արարողությունը կատարեց Ինկիսիում / Կոնգոյի ԴՀ/, ժամերգության ժամանակ:

Շրջանային առաքյալ Քուբուբա Սոկոն / 1969/ դարձավ շրջանային առաքյալ Չարլես Ս. Նդանդուլայի հետնորդը: 219-ի հուլիսի 21-ի կիրակի օրվա ժամերգության ժամանակ գլխավոր առաքյալ Շնայդերը մինչ այդ պահը որպես շրջանային առաքյալի օգնական գործողին հանձնարարեց շրջանային առաքյալի գործը շրջանային առաքյալի Զամբիայի, Մալավիի և Զիմբաբվեի տարածաշրջանի համար: Շրջանային առաքյալի օգնականներ Ռոբերտ Նզամբան և Արնոլդ Միանգոն աջակցում են նոր շրջանային առաքյալին:

2019-ի սեպտեմբերի 22-ի կիրակի օրը Քրիստչըրչում/ Նոր Զելանդիա/ եկեղեցու հոգևոր առաջնորդը Պապուա- Նորգվիենայի համար ձեռնադրեց երկու առաքյալ՝ մինչ այդ պահը որպես շրջանային ավագ գործող Պատրիկ Էլլի Զիլաբեին / 1985/ և Լուկաս Քարլսոն Զուպոկին / 1977/: Նրանք դարձան առաքյալ Զուհուկե Հունգիթոյի հետնորդները, ով 2018-ի հոկտեմբերին մահացել էր սրտի կանգից՝ քույր-եղբայրներին այցի գնալիս :.

Հարավային Գերմանիայի տարածաշրջանային եկեղեցու համար միջազգային եկեղեցու ղեկավարը մինչ այդ պահը որպես շրջանային ավետարանիչ գործող Անդրեաս Մաթիաս Զարգանթին / 1968/ ձեռանդրեց առաքյալ: Այդ արարողությունը գլխավոր առաքյալը կատարեց 2019-ի դեկտեմբերի 8-ի կիրակի օրվա ժամերգության ժամանակ Ֆելլբախում / Գերմանիա/: Առաքյալ Զարգանթը դարձավ առաքյալ Վոլֆգանգ Յենքերի հետնորդը:

2019-ի դեկտեմբերի 13-ին, ուրբաթ օրը, առաքյալի պաշտոնը ստանձեցին Քոլլինս Չացիլավա Լուհանգան /1980/ Զամբիայի համար, իսկ Քուրդվել Մուքվաթին/1961/՝ Բոթսվանայի համար: Գլխավոր առաքյալը ձեռնադրությունը կատարեց Վալվիս Բեյում / Նամիբիա/, ժամերգության ժամանակ:

Հանգստի ուղարկում

2019-ի հուլիսի 6-ի շաբաթ օրը, Ինկիսիում/ Կոնգոյի ԴՀ/ Գլխավոր առաքյալ Շնայդերը ժամերգության ժամանակ առաքյալ Ինոնքենտ Քաբուլեային/ 1954/ ուղարկեց հանգստի՝ ելնելով տարիքից: Նա՝ որպես սպասավոր եղբայր, 37 տարի ծառայել էր Կոնգոյի ԴՀ-ի հարավ- արևելյան մասի տարածաշրջանային եկեղեցում, որից 11 տարին՝ որպես առաքյալ:.

Շրջանային առաքյալ Չարլես Ս. Նդանդուլան / 1953/ ուղարկվեց հանգստի: 2019-ի հուլիսի 21-ի կիրակի օրը, եկեղեցու միջազգային ղեկավարը Լուսակայում/ Զամբիա/ անցկացրեց ժամերգություն և հրաժեշտ տվեց առաքյալներին՝ ակտիվ ծառայությունից հանգստի անցնելու առթիվ: Չարլես Ս. Նդանդուլան 35 տարի ծառայել է որպես սպասավոր, որից 14 տարին՝ որպես շրջանային առաքյալ Զամբիայի, Մալավիի, Զիմբաբվեի համար:

Եկեղեցու ղեկավարը 2019-ի օգոստոսի 4-ի կիրակի օրվա ժամերգության ժամանակ 47 տարվա սպասավորությունից հետո հանգստի ուղարկեց Բրազիլիայի և Բոլիվիայի շրջանային առաքյալ ին: Ռաուլ Մոնթես դե Օկան/ 1953/ ուղիղ հիսուն տասնամյակ ծառայել է տարբեր պաշտոններում, որից 16-ը՝ որպես առաքյալ: Նույն ամիս ամսաթվին Բրազիլիայի և Արգենտինայի շրջանային առաքյալի երկու տարածաշրջանները միավորվեցին և դարձան Հարավային Ամերիկայի շրջանային առաքյալի նոր տարածաշրջան,որը վստահված է շրջանային առաքյալ Էնրիքվե Մինիոյի ղեկավարությանը:

Գլխավոր առաքյալի առաջադրանքով՝ առաքյալ Քինդանգու Վինգին 2019-ի հոկտեմբերի 20-ի կիրակի օրը, Մուշիում / Կոնգոյի ԴՀ/ առաքյալ Ժան-Բատիստե Մաթերին / 1959/ ուղարկեց հանգստի: Առաքյալը 20 տարի ծառայել էր Բանդունդուի շրջանի քույր-եղբայրներին:

Առաքյալներ Ֆոլքեր Քյունլեն / 1953/ ու Վոլֆգանգ Ցենքերը / 1953/ 2019-ի դեկտեմբերի 8-ի կիրակի օրը, Ֆելլբախում / Գերմանիա/ անցկացված ժամերգության ժամանակ ուղարկվեցին հանգստի: Այդ սպասավոր եղբայրները շատ տարիներ և տասնամյակներ ծառայել են Գերմանիայում և Աֆրիկայի տարբեր երկրներում:

Կյանքից հեռացում

2019-ի հոկտեմբերի 1-ին, երեքշաբթի օրը, ավտոճանապարհային ծանր վթարի հետևանքով մահացավ առաքյալ Քափոթե Մարկոս Միսսելոն / 1970/: Առաքյալ Միսսելոն թողեց իր կնոջը՝ Թերեզա Վերոնիկա Լինոյին և 7 երեխաներին: Նա շրջանային առաքյալի օգնական Ժոան Ուանուքվե Միսսելոյի հարազատ եղբայրն էր: Առաքյալ Միսսելոն մինչև 2008-ի նոյեմբերը, երբ Անգոլայի աշխատանքային տարածաշրջանում ձեռնադրվեց առաքյալ, ծառայել է տարբեր պաշտոններում:

Շրջանային առաքյալի տարածաշրջաններ

Նորառաքելական եկեղեցին ամբողջ աշխարհում ունի 15 շրջանային առաքյալի տարածաշրջաններ: Այդ տարածաշրջանները ղեկավարվում են շրջանային առաքյալների կողմից: Պատասխանատու են հետևյալ առաքյալները՝

– Միխայել Դավիդ Դեփփները / 1961 / - Կոնգոյի ԴՀ Արևմուտք
– Միխայել Էհրիշ / 1959 / - Հարավային Գերմանիա
– Յոզեֆ Օպեմբա Էխույա / 1969 / - Արևելյան Աֆրիկա
– Էդի Իսնուգրոհո /1963 / - Հարավ-արևելյան Ասիա
– Լեոնարդ Ռիչարդ Քոլբ / 1956 / - ԱՄՆ
– Ռյուդիգեր Քրաուզե / 1960 / - Հյուսիսային և Արևելյան Գերմանիա
– Ջոն Լեսլի Քրիել / 1956 / - Հարվային Աֆրիկա
– Էնրիքվե Էդուարդո Մինիո / 1960 / - Հարավային Ամերիկա
– Վոլֆգանգ Նադոլնի / 1956 / - Բեռլին-Բրանդենբուրգ
– Փեթեր Շուլթե / 1963 / - Խաղաղ օվկիանոսի Արևմտյան տարածաշրջան
– Քուբուբա Զոքո /1969 / - Զամբիա, Մալավի, Զիմբաբվե
– Ռայներ Շթորք / 1958/ - Արևմտյան Գերմանիա
– Չիչի Չիսեքեդի / 1972 / - Կոնգոյի ԴՀ Հարավ-արևելք
– Մարկ Վոլլ / 1959 /- Կանադա
– Յուրգ Ցբինդեն /1958 /- Շվեյցարիա

Մի շարք առաքյալներ աջակցություն են ստանում շրջանային առաքյալների օգնականների կողմից, ովքեր որպես կանոն գործում են ընտրված երկրներում՝:

– Դավիդ Դեվառաջ / 1959 / - Հնդկաստան
– Ֆրանկ Շթեֆան Զուր / 1959 / - Կանադա
– Ջոն Վիլյամ Ֆենդթ / 1957 / - ԱՄՆ
– Առնոլդ Նդաքոնդվա Միանգո / 1957 / - Մալավի
– Ժոան Ուանուքվե Միսսելո /1965 / - Անգոլա
– -Մանդլա Պատրիկ Միվանացի /1963 / - Հարավային Աֆրիկա
– Ռոբերտ Նզամբա / 1962 / - Զամբիա
– Ջոն Զոբոթթկա / 1956 / - Կանադա

Լուսանկարները՝ ՆԱԵ Վեսթեռն պացիֆիկ /1/, ՆԱԵ Զամբիա /2/

Առաքյալներ Քուրդվել Մուկվաթիի / 1961/ և Քոլինս Չազիլվա Լուհանգայի /1980/ ձեռնադրությունը)

Տեղեկատու

02.04.2020	Բիակ (Պապուա)
05.04.2020	Մանադո (Ինդոնեզիա)
10.04.2020	Վիլիսաու(Շվեյցարիա)
12.04.2020	Շվաբական Հալլ (Գերմանիա)
19.04.2020	Լյունեբուրգ (Գերմանիա)
26.04.2020	Բլոյեմֆոնթեին (Հարավային Աֆրիկա)
02.05.2020	Պրահա (Չեխիա)
03.05.2020	Լինց (Ավստրիա)
10.05.2020	Կիև (Ուկրաինա)
24.05.2020	Օսնաբրյուք (Գերմանիա)
31.05.2020	Բուենոս Այրես (Արգենտինա)
13.06.2020	Լիլոնգվե (Մալավի)
14.06.2020	Հարարե(Զիմբաբվե)
25.06.2020	Բոնաիրե (Նիդերլանդական Անթիլիա)
28.06.2020	Պարամարիբո (Սուրինամ)

New Apostolic Church
International